ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/5.1.2-3-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. հունիսի 11-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 5.1 միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) առցանց նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ. Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. 1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 5.1 միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 3 (երեք) հայտ՝

- «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի,
- «ՏԱԹԵՎ SSS» ՍՊԸ-ի,
- «Էլիտար» ՍՊԸ-ի կողմից կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 5.1 միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 2 (երկու) կազմակերպության՝

- «ՏԱԹԵՎ SSS» ՍՊԸ-ի,
- «Էլիտար» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- «ՏԱԹԵՎ SSS» ՍՊԸ-ի կողմից կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի 2.4.1 կետի պահանջներին, այդ թվում՝ ընկերության կողմից ներկայացված աշխատանքային պլանը չի ներառում 2.4.1 կետով սահմանված «Զբոսաշրջության կոմիտեի տարեկան ամփոփիչ միջոցառում» բաղադրիչը: Միաժամանակ ընկերության կողմից ներկայացված տեղեկանքը (ԱԱՀ-ով աշխատելու վերաբերյալ) ստորագրված չէ՝ չպահպանելով հրավերի 2.4 կետի պահանջը՝ «Սույն մասի 2.3-րդ կետում նշված որակավորման տվյալների չափանիշների գնահատման համար Մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը **(ստորագրված և կնքված)**»:
- «Էլիտար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի 2.4.1 կետի պահանջներին:

Մեկի՝

- «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի համար սահմանված չափորոշիչներին:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 2 (երկու) կազմակերպության՝

- «ՏԱԹԵՎ SSS» ՍՊԸ-ի,
- «Էլիտար» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը:

2. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 5.1 միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝ **«Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ն:**

3. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 5.1 միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացման համար՝

• **«Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ** հետ՝ 13.500.000 (տասներեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (այդ թվում՝ 2.250.000 (երկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ ԱԱՀ) գումարի չափով:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) - _____

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Հ.Սահակյան - _____

Ա.Սողբաթյան - _____

Շ.Հովսեփյան - _____